ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2025 թվականի N 203 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 08-015-0066-0046, 08-015-0066-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ 0,055096 ՀԵԿՏԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով և 50-րդ կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 08-015-0066-0046, 08-015-0066-0047 կադաստրային ծածկագրերով 0,055096 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակություն:
2. Հողամասի գործառնական նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղում գտնվող Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող, 0,055096 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 10/2 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի հունիսի 16
գ. Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2025 թվականի N 204 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-026-0009-0005, 08-026-0009-0006 ԵՎ 08-026-0009-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՆՈՐ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի, 35-րդ և 50-րդ կետերի դրույթներով, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Բավրա, 2-րդ փողոց, 10 հողամաս (վկայական՝ 14052025-08-0041) հասցեում գտնվող 08-026-0009-0005 կադաստրային ծածկագրով 0.479 հեկտար, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Բավրա, 2-րդ փողոց, 8 հողամաս (վկայական՝ 09062025-08-0040) հասցեում գտնվող 08-026-0009-0006 կադաստրային ծածկագրով 0.339 հեկտար և Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Բավրա, 2-րդ փողոց, 6 հողամաս (վկայական՝ 16062025-08-0006) հասցեում գտնվող 08-026-0009-0007 կադաստրային ծածկագրով 0.385 հեկտար հարակից հողամասերի միավորման արդյունքում նոր առաջացած հասցեավորման օբյեկտին տրամադրել՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Բավրա 2-րդ փողոց, 6 -10 հողամաս հասցեն:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի մայիսի 16
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2025 թվականի N 205- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16 - Ի ԹԻՎ 203 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝ **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 16-ի թիվ 203-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) Որոշման 3-րդ կետում «գյուղ Աշոցք,» բառերից և ստորակետից հետո լրացնել հետևյալը՝ «3-րդ փողոց»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի հունիսի 17
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2025 թվականի N 206 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԿԱՐՄՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 08-054-0004-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գարիկ Սիրեկանի Պետրոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իր ընտանիքին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, բնակավայր Կարմրավան, 2-րդ փողոց, բնակելի տուն 2 հասցեում գտնվող, 0,209586 հեկտար մակերեսով, 08-054-0004-0008 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն (այսուհետ՝ շինություն) օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 22-ի թիվ 02 որոշմամբ և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (գրանցված 726-ով) Գարիկ Սիրեկանի Պետրոսյանի /ծնված՝ 01-ը ապրիլի 1987 թվական/, Շուշանիկ Պողոսի Գրիգորյանի /ծնված՝ 04-ը ապրիլի 1957 թվական/, Մառուսյա Սիրեկանի Պետրոսյանի /ծնված՝ 10-ը հունվարի 1984 թվական/ և Ռաֆիկ Սիրեկանի Պետրոսյանի /ծնված՝ 08-ը օգոստոսի 1982 թվական/ անվամբ սեփականաշնորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան գյուղի 2-րդ փողոց, բնակելի տուն 2 հասցում գտնվող, 08-054-0004-0008 կադաստրային ծածկագրով 0,209586 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 124.74 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, 47,88 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը, 3,1 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ շինությունը և 174,88 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը կառուցվել են 1989 - 1995 թվականներին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը), ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 24,7 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և 1,8 քառակուսի մեետր մակերեսով աստիճանահարթակը կառուցվել են 2006 թվականին, իսկ բնակելի նշանակության 13,76 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 10,34 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը՝ 2022 և 2023 թվականներին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով

պահպանվող շահերը, կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 42 հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով ու 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետի դրույթով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի ու 22.1-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

1. Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 22-ի թիվ 02 որոշմամբ և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (գրանցված 726-ով) Գարիկ Սիրեկանի Պետրոսյանի /ծնված՝ 01-ը ապրիլի 1987 թվական/, Շուշանիկ Պողոսի Գրիգորյանի /ծնված՝ 04-ը ապրիլի 1957 թվական/, Մառուսյա Սիրեկանի Պետրոսյանի /ծնված՝ 10-ը հունվարի 1984 թվական/ և Ռաֆիկ Սիրեկանի Պետրոսյանի /ծնված՝ 08-ը օգոստոսի 1982 թվական/ անվամբ սեփականաշնորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան գյուղի 2-րդ փողոց, բնակելի տուն 2 հասցում գտնվող, 08-054-0004-0008 կադաստրային ծածկագրով 0,209586 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա 1989-1995 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 124.74 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, 47,88 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը, 3,1 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ շինությունը և 174,88 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:

2. Նույն հողամասի վրա 2006 թվականին ինքնակամ կառուցված 24.07 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, 1,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանահարթակը, 2022 թվականին ինքնակամ կառուցված 13,76 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 2023 թվականներին ինքնակամ կառուցված 10,34 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը թողնել ինքնակամ, ինքնակամ կառույցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում են հողամասի սեփականատերերը:

3. Քաղաքացիներ Գարիկ Սիրեկանին Պետրոսյանի, Շուշանիկ Պողոսի Գրիգորյանին, Մառուսյա Սիրեկանի Պետրոսյանին և Ռաֆիկ Սիրեկանի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Կարմրաան 2-րդ փողոց, բնակելի տուն 2 հասցեում գտնվող, 08-054-0004-0008 կադաստրային ծածկագրով բնակելի նշանակության բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Կարմրաան, 2-րդ փողոց, բնակելի տուն 2:

4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի հունիսի 18
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ էլ. փոստ ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2025 թվականի N 207 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ՑՈՂԱՄԱՐԳ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0,87 ՀԵԿՏԱՐ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ (08-112-0110-0015)-ԻՑ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԸ ԱՆԱՏՈԼԻ ՏԻԳՐԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և 2025 թվականի հունիսի 10-ին Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված **Անատոլի Բաղդասարյանի** դիմումը որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Ցողամարգ) սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,87 հեկտար 3-րդ կարգի արոտը կադաստրային ծածկագիր՝ (08-112-0110-0015)-ից գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության Անատոլի Տիգրանի Բաղդասարյանին (ն/ք՝ 013618558, տրված՝ 2022 թվականի մայիսի 19-ին, 034-ի կողմից) և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով:
2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել է 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի հունիսի 18
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվականի N 208 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՐԻՍԱ ՑՈԼԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-054-006-007-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Լարիսա Առաքելյանի դիմումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան բնակավայրում գտնվող քաղաքացի Լարիսա Ցոլակի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, բնակավայր Կարմրավան 1-ին փողոց, բնակելի տուն 20 հասցեում գտնվող, 08-054-006-007-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը (գրանցված 2008 թվականի հունիսի 11-ին, վկայական 2036863) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Կարմրավան, 1-ին փողոց, բնակելի տուն 20:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի հունիսի 20
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվականի N 209 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱՎԱԶԴ ԵՐՎԱՆԴԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-015-037-026-001-01 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 16-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված **Արտավազդ Սարգսյանի լիազորված անձ** Կարեն Կարապետյանի դիմումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում գտնվող քաղաքացի Արտավազդ Երվանդի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, բնակավայր Աշոցք 4-րդ փողոց, բնակելի տուն 1/1 հասցեում գտնվող, 08-015-037-026-001-01 կադաստրային ծածկագրով բնակելի տանը (գրանցված 2007 թվականի փետրվարի 6-ին, վկայական 2042754) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Աշոցք, 4-րդ փողոց, բնակելի տուն 1/1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի հունիսի 20
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025 թվականի N 210-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 104-Ն որոշման 2-րդ կետը. որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025 թվականի բյուջեի հոդվածներում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1. Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

1) բաժին 01, խումբ 3, դաս 3, հոդված 4214 «200,0» թիվը փոխարինել «0» թվով,

2) բաժին 01, խումբ 3, դաս 3, հոդված 4234 «1000,0» թիվը փոխարինել «1200.0» թվով:

2. Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

1) բաժին 04, խումբ 2, դաս 1, հոդված 4239 «400,0» թիվը փոխարինել «300,0» թվով,

2) բաժին 04, խումբ 2, դաս 1, հոդված 4252 «700,0» թիվը փոխարինել «800.0» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թ. հունիսի 24
գ.Աշոցք